

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐԱՔՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԼՈՒՍԱՆՈՐԶԻՆ ՈՐ Ի ՂԱԼԱԹԻՈՒ

Շնորհիւ եւ ողորմութեամբն Լ'ստուծոյ յայսմ' ամի որ էր թուականն հայոց ՌՄԽԸ Սեպտեմբերի ԺԲ. յաւուր ԲՇ եղեւ սկիզբն հիմնարկութեան տաճարին, կառուցեալ յանուն Ս. Լուսաւորչին մերոյ ի Ղալաթիա. զկնի յայրեցմանէն 28 ամաց, 7 ամսոց եւ 11 աւուրց:

Բայց այսու օրինակաւ քանզի յորմէ հետէ պըրեցաւ տաճարս այս՝ բազմիցս մատուցաւ նամակ աղերսանաց թագաւորացն Երեց. այսինքն՝ Սուլթան Մուստաֆային, որոյ աւուրս այրեցաւ. Սուլթանն Համիտին եւ Սուլթան Սէլիմին. բայց չեղեւ հնար ստանալ հրաման շինութեան եւ նորոգութեան խնդրեալ աւերակաց եկեղեցւոյս այսորիկ, որոց տեսութիւն միայն արտասուայից հառաչանօք լինէր, թող թէ բնակ ժողովրդեանն յամբարանն արեւակէզ եւ ի ձմերան ցրտասառոյց եղելու թիւն ի բացօդեայ յաւերակսն արանց եւ կանանց եւ այս ամենայն լինէր յաղաքս անմիաբանութեան եւ երկպառակութեան ժողովրդոց եւ մանաւանդ իշխանայ տեղւոյն. որք զգանձս տաճարին յափշտակեալ իւրացուցանէին եւ ուստի ոչ կամէին լռելեայն շինութիւն նորին. զի մի սեփականեալ դրամին պահանջեսցեն ի նոցանէ բռնութեամբ: Եւ իբրեւ իրս այս այսպէս անցանէր ի բաղում ամս, ապա ի յոգիս ապաստան եղեալ յարեան ի վերայ նոցա խումբք ռամկաց սրիկայից եւ ոլոգամբրկից, որոց բազմութիւնք այնքան էին, որք պաշտօնէից արքայական պալատանն՝ սինլիզոր նաւուց թիավարացն էին, մանաւանդ զի տեսանէին զազգս Յուդայի գուն գործեալ հետզհետէ նորոգեն զեկեղեցիս իւրեանց: Ի նախանձ բարի շարժեալ, բողոք բարձեալ դիմեցին առհասարակ արք եւ կանայք յեպիսկոպոսարանն Հայոց՝ առ ոտս Դանիէլի Պատրիարքին. աղաղակէին խնդրելով զիրաւունս եւ ասեն. իշխանքն մեր գողացեալ զինչս եկեղեցւոյն մերոյ՝ այժմ՝ ղողեալ թագուցեալ կան եւ ոչ կամին միաբան հաւանութեամբ փոյթ ունել եկեղեցւոյս շինութեան, եւ արդ դատ արա ընդ մեզ եւ ընդ նոսա. ապա թէ ոչ վախճան իրին դառնութեամբ վճարի. եւ նորա ունկնդիր եղեալ բանից նոցա քաղցրութեամբ եւ քաջաբերս տուեալ մխիթարեաց ամբարկան եւ յորդոր բանիւք գնալ իւրաքանչիւր ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ՝ ասելով. ահա ես եկից զկնի ձեր եւ ընդ բարեխոհ արանց զելս իրացն խորհել, մարթացուի, եւ վաղվաղակիւ ի նաւ գնալ ի Ղալաթիա: